Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2012» ինդեքս

2011թ. հոկտեմբերի 19-ին Համաշխարհային բանկը և Միջազգային ֆինանսական կորպորացիան հրապարակել են իրենց ամենամյա «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2012» հետազոտությունը, որում ուսումնասիրվել և գնահատվել է աշխարհի 183 երկրներում գործարար միջավայրը և գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը: Այս հետազոտության նպատակն է վերլուծել տնտեսական գործունեության կենսապարբերաշրջանին (life cycles) վերաբերող կանոնակարգերը և բացահայտել աշխարհի տարբեր երկրներում գործարար միջավայրը կարգավորող այն ոլորտները, որտեղ առկա են գործարարության իրականացման լուրջ խոչընդոտներ, և անհրաժեշտ են լուրջ բարեփոխումներ:

Նշենք, որ գործարարությամբ զբաղվելու դյուրինությամբ աշխարհի 183 տնտեսությունների առաջին տասնյակում են Սինգապուրը, Հոնկոնգը, Նոր Զելանդիան, ԱՄՆ-ը, Դանիան, Նորվեգիան, Մեծ Բրիտանիան, Կորեան, Իսլանդիան և Իռլանդիան, իսկ վերջին տասնյակում են՝ Հաիթին, Բենինը, Գվինեա-Բիսաուն, Վենեսուելան, Կոնգոյի Ժողովրդական Հանրապետությունը, Գվինեան, Էրիթրեան, Կոնգոն, Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունը և Չադը:

«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2012» հետազոտության մեջ ուսումնասիրվել են գործարար միջավայրի կարգավորման տասը ոլորտներ՝ ***գործարարություն սկսելը (գրանցելը), շինարարական թույլտվությունների ստացումը, էլեկտրաէներգիայի ստացումը, սեփականության գրանցումը, վարկի ստացումը, ներդրողների պաշտպանվածությունը, հարկերի վճարումը, սահմանային առևտրի դյուրինությունը, պայմանագրերի կիրարկումը, անվճարունակության պատճառով լուծարումը:*** Նշված ոլորտների համար հաշվարկվել են առանձին ենթաինդեքսներ, որոնց պարզ թվաբանական միջինը կազմում է ***«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը»*** ամփոփ ինդեքսը տվյալ երկրի համար: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2012» հետազոտության մեջ օգտագործվել են 2010 թ. հունիս - 2011 թ. հունիս ժամանակահատվածի տվյալները:

Ենթաինդեքսների հաշվարկման համար հիմք է հանդիսանում հարցումների միջոցով ստացված տեղեկատվությունը, որը, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում է համապատասխան ոլորտը կարգավորող օրենքների կամ օրենսդրական ակտերի դրույթների հիման վրա: Ընդ որում՝ հարցումների համար անհրաժեշտ հարցաթերթիկները կազմվում են Համաշխարհային բանկի փորձագետների կողմից՝ երկրների գործարար միջավայրը կարգավորող օրենսդրական դաշտը ուսումնասիրելուց հետո:

<u>Հայաստանի գնահատականները</u>. Հայաստանի ինդեքսը Համաշխարհային բանկի կողմից գնահատվում է 2004 թվականից, և այս ողջ ընթացքում գործարար միջավայրի կարգավորման ոլորտում գրանցվել են 22 բարեփոխումներ: Մասնավորապես՝ ***գործարարություն սկսելու ոլորտում*** գրանցվել է 3 բարեփոխում (2007թ., 2010թ. և 2012թ. հետազոտություններում), ***շինարարական թույլտվություններ ստանալու ոլորտում*** 3 բարեփոխում (2007թ., 2009թ. և 2012թ.), ***աշխատողներ վարձելու ոլորտում*** 1 բարեփոխում (2006թ.), ***սեփականության գրանցման ոլորտում*** 1 բարեփոխում (2007թ.), ***վարկեր ստանալու ոլորտում*** 6 բարեփոխում (2005թ., 2006թ., 2007թ., 2008թ., 2010թ. և 2012թ.), ***հարկերի վճարման ոլորտում*** 1 բարեփոխում (2012թ.) ***սահմանային առևտրի ոլորտում*** 3 բարեփոխում (2008թ., 2010թ. և 2011թ.), ***պայմանագրերի կիրարկման ոլորտում*** 2 բարեփոխում (2005թ. և 2009թ.), ***անվճարունակության պատճառով լուծարման ոլորտում***

2 բարեփոխում (2005թ., 2008թ. և 2012թ.): 2004-2012թթ. հետազոտություններում ոչ մի բարեփոխում չի գրանցվել ***ներդրողների պաշտպանվածության*** ոլորտում:

«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2012» ինդեքսով Հայաստանը աշխարհի 183 երկրների թվում 55-րդն է, որը 6 տեղով բարելավում է նախորդ տարվա 61-րդի համեմատ: Նկատենք, որ հետազոտության հեղինակները փոփոխության են ենթարկել իրենց մեթոդաբանությունը և չափման նոր ցուցանիշ են կիրառել՝ **«Էլեկտրաէներգիայի ստացումը»**, ինչի արդյունքում, ի թիվս շատ երկրների, փոփոխվել են նաև Հայաստանի արդյունքները: Ըստ այդմ՝ եթե նախկին մեթոդաբանությամբ Հայաստանը նախորդ տարվա գնահատականներով զբաղեցնում էր 48-րդ տեղը, ապա նոր մեթոդաբանությամբ զբաղեցրել է 61-րդ տեղը աշխարհի 183 երկրների թվում:

Նախորդ տարվա համեմատ Հայաստանի դիրքի **<u>բարելավումը</u>** 6 տեղով պայմանավորվել է ***գործարարություն սկսելու*** (10 տեղով), ***շինարարական թույլտվություններ ստանալու*** (38 տեղով), ***վարկերի ստացման*** (5 տեղով) ***և հարկերի վճարման*** (6 տեղով) ոլորտները գնահատող ենթաինդեքսների բարելավմամբ (տե՛ս աղյուսակ 2): Միևնույն ժամանակ, նախորդ տարվա համեմատ Հայաստանի դիրքը **<u>վատացել է</u>** աշխարհի 183 երկրների թվում ***էլեկտրաէներգիայի ստացումը*** (2 տեղով), ***սեփականության գրանցումը*** (1 տեղով), ***ներդրողների պաշտպանվածությունը*** (4 տեղով), ***սահմանային առևտրի դյուրինությունը*** (1 տեղով), ***պայմանագրերի կիրարկումը*** (27 տեղով) և ***անվճարունակության պարճառով լուծարումը*** (6 տեղով) ոլորտներում:

Ներկայացնենք վերոնշյալ ենթաինդեքսներից յուրաքանչյուրի փոփոխությունը և դրա պատճառները:

2012թ. ***գործարարություն սկսելը (գրանցելը)*** ենթաինդեքսի գծով Հայաստանը արձանագրել է զգալի առաջընթաց՝ նախորդ տարվա 20-րդ տեղի փոխարեն ներկայումս գրավում է 10-րդ տեղը՝ աշխարհի 183 երկրների թվում: Այս առաջընթացը պայմանավորված է գործարարության մեկնարկը դյուրինացնելու նպատակով իրականացված բարեփոխումներով: Մասնավորապես, ներդրվել է «մեկ պատուհանի» համակարգը, ինչպես նաև սկսել են կիրառվել ընկերությունների առցանց (online) գրանցումը, որի արդյունքում կրճատվել են գործարարություն սկսելու համար անհրաժեշտ գործընթացների քանակը, դրա վրա ծախսվող օրերի թիվը և ծախսը (տե՛ս աղյուսակ 1): Աշխարհի 183 երկրների հետ Հայաստանը 10-րդ տեղը կիսում է Սաուդյան Արաբիայի հետ:

Նույնը վերաբերում է նաև ***շինարարական թույլտվություններ ստանալու*** ենթաինդեքսի գծով Հայաստանի առաջընթացին. նախորդ տարվա 95-րդ տեղի փոխարեն Հայաստանը ներկայումս գրավում է 57-րդ տեղը: Այս առաջընթացը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներդրվել է շինարարության թույլտվություն ստանալու գործընթացի քարտեզագրում, իրականացվել են միջոցառումներ՝ Երևանի քաղաքապետարանում այդ գործընթացի «մեկ պատուհանի» համակարգի ներդրման ուղղությամբ, վերացվել է օրենսդրությամբ չնախատեսված գումարների գանձման պրակտիկան, ինչպես նաև փոքր շինությունների համար բնապահպանական փորձաքննություն իրականացնելու պահանջը: Սա հանգեցրել է շինարարական թույլտվություններ ստանալու համար անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի և ծախսի կրճատմանը (տե՛ս աղյուսակ 1):

Էլեկտրաէներգիայի ստացումը ենթաինդեքսի գնահատման համար հաշվի է առնվում այն ընթացակարգերի քանակը, ժամանակը և ծախսը, որոնք ընկերություններին անհրաժեշտ են իրենց հաստատությունը էլեկտրացանցին միացնելու և մշտական էլեկտրականություն ունենալու նպատակով: Թեև նախորդ տարվա համեմատ այս նպատակով իրականացվող ծախսը (հաշվարկվում է որպես 1 շնչի հաշվով եկամտի տոկոս) Հայաստանում նվազել է, այնուամենայնիվ, քանի որ մյուս երկրներում բարեփոխումներն առավել զգալի են եղել, արդյունքում այս ենթաինդեքսի

գծով Հայաստանի դիրքը վատացել է. նախորդ տարվա 148-րդ տեղի փոխարեն ներկայումս գրավում է 150-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 1):

Սեփականության գրանցումը ենթաինդեքսի գծով Հայաստանում գրանցվել է հետընթաց 1 տեղով. նախորդ տարվա 4-րդ տեղի փոխարեն Հայաստանը ներկայումս գրավում է 5-րդ տեղը: Բանն այն է, որ այս ենթաինդեքսի հիմքում ընկած Հայաստանի ցուցանիշները նախորդ տարվա համեմատ անփոփոխ են մնացել, մինչդեռ մյուս երկրներում առաջընթաց բարեփոխումներ են գրանցվել (տե՛ս աղյուսակ 1):

Վարկի ստացումը ենթաինդեքսի գծով Հայաստանը նախորդ տարվա 45-րդ տեղի փոխարեն ներկայումս գրավում է 40-րդ տեղը, որը կիսում է աշխարհի այլ 7 երկրների՝ Ֆինլանդիայի, Իսլանդիայի, Էստոնիայի, Մեքսիկայի, Հնդկաստանի, Մոլդովայի և Տրինիդադ Տոբագոյի հետ: Նախորդ տարվա համեմատ այս ենթաինդեքսի հիմքում ընկած ցուցանիշներից բարելավվել է վարկային տեղեկատվության ինդեքսի խորությունը, զգալիորեն ընդլայնվել է ինչպես պետական ռեգիստրի, այնպես էլ մասնավոր բյուրոների ծածկույթները (տե՛ս աղյուսակ 1):

Ներդրողների պաշտպանվածությունը ենթաինդեքսի գծով Հայաստանը գրանցել է հետընթաց 4 տեղով, որը, ինչպես և ***էլեկտրաէներգիայի ստացումը*** և ***սեփականության գրանցումը*** ենթաինդեքսների դեպքում, պայմանավորվել է այս ոլորտում Հայաստանի համեմատ աշխարհի այլ երկրների արագ առաջընթացով: Ինչպես երևում է աղյուսակ 1-ում, ներդրողների պաշտպանվածության ենթաինդեքսի հիմքում ընկած ցուցանիշներից և ոչ մեկի մակարդակը նախորդ տարվա համեմատ չի փոխվել (տե՛ս աղյուսակ 1): Աշխարհի 183 երկրների թվում ***ներդրողների պաշտպանվածության*** ենթաինդեքսով Հայաստանը 97-րդ տեղը կիսում է աշխարհի այլ 13 երկրների՝ Գերմանիայի, Իսպանիայի, Չեխիայի, Չինաստանի, Մարոկոյի, Կատարի, Օմանի, Լիբանանի, Բոսնիա-Հերցեգովինայի, Ուրուգվայի, Նիկարագուայի, Քենիայի և Տանզանիայի հետ:

Հարկերի վճարում ենթաինդեքսի գծով Հայաստանը գրանցել է առաջընթաց 6 տեղով, որին նպաստել են հարկային հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգի ներդրումը, հարկային հաշվետվությունների ձևերի քանակի կրճատումը: Այս ամենի արդյունքում, նախորդ տարվա համեմատ 16-ով կրճատվել է հարկերի վճարումների տարեկան թիվը և 81 ժամով կրճատվել է դրանց վրա ծախսվող ժամանակը (տե՛ս աղյուսակ 1):

Սահմանային առևտրի դյուրինությունը ենթաինդեքսի գծով Հայաստանի դիրքը վատացել է 1-ով՝ նախորդ տարվա 103-րդ տեղի փոխարեն Հայաստանը ներկայումս գրավում է 104-րդ տեղը: Այս ենթաինդեքսի հիմքում ընկած ցուցանիշներից վատացել է միայն 1 արտահանման և ներմուծման ծախսը: Մասնավորապես, 1 կոնտեյների հաշվով արտահանման ծախսը նախորդ տարվա համեմատ ավելացել է 145 ԱՄՆ դոլարով, իսկ ներմուծման ծախսը՝ 150 ԱՄՆ դոլարով (տե՛ս աղյուսակ 1): Նկատի ունենալով, որ 2010թ. հունիս-2011թ. հունիս ժամանակահատվածում արտահանման/ներմուծման հետ կապված վճարումների սակագների փոփոխություններ չեն եղել, կարծում ենք, որ դա պայմանավորված է նրանով, որ ՀՀ դրամից ԱՄՆ դոլար փոխարկման հաշվարկների հիմքում նախորդ տարվա համեմատ օգտագործվել է մի փոքր արժևորված փոխարժեք: Այսպիսով, կարելի է նշել, որ սահմանային առևտրի դյուրինություն ենթաինդեքսի գծով Հայաստանի դիրքի 1 տեղով վատացումը ամենևին էլ պայմանավորված չէ այս ոլորտում երկրի հետընթացով:

Պայմանագրի կիրարկում ենթաինդեքսի գծով Հայաստանի դիրքը վատացել է 27 տեղով. նախորդ տարվա 64-րդ տեղի փոխարեն Հայաստանը ներկայումս գրավում է 91-րդ տեղը: Այս հետընթացը պայմանավորվել է Հայաստանում պայմանագրի կիրարկման հետ կապված օրերի կտրուկ ավելացմամբ: Եթե նախորդ տարի պայմանագրի կիրարկման համար Հայաստանում ծախսվում էր 285 օր, ներկայումս այդ ամենի համար պահանջվում է 440 օր (տե՛ս աղյուսակ 1): Մասնավորապես, նախորդ տարվա համեմատ 175 օրով ավելացել է գործի հետաքննության և

դատական պրոցեսի վրա ծախսվող ժամանակը և 20 օրով նվազել է դատական հայցի լրացման և ներկայացման ժամանակը:

Անվճարունակության պատճառով լուծարում (նախկինում՝ ***գործարարության փակում)*** ենթաինդեքսի գծով Հայաստանի դիրքը վատացել է 6 տեղով. նախորդ տարվա 56-րդ տեղի փոխարեն Հայաստանը ներկայումս գրավում 62-րդ տեղը: Աղյուսակ 1-ում երևում է, որ անվճարունակության պատճառով լուծարման համար պահանջվող ժամանակը և ծախսը (հաշվարկված որպես գույքի արժեքից տոկոս) չեն փոխվել: Չնչին փոփոխություն է կրել միայն սնանկության գործընթացի արդյունքում մարված պարտքերի (փոխհատուցման) չափը, որի 0.3 ցենտ նվազումը, սակայն, չենք կարծում, որ կարող էր բերել երկրի դիրքի 6 տեղով վատացման: Հետևաբար, այս ենթաինդեքսի վատացումն էլ կարելի է բացատրել Հայաստանի համեմատ այլ երկրների ավելի ակտիվ բարեփոխումներով:

Այսպիսով, ընդհանրացնելով ենթաինդեքսների շարժերի արդյունքները, կարելի է փաստել, որ նախորդ տարվա համեմատ **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը-2012»** ինդեքսի հիմքում ընկած տասը ենթաինդեքսներից՝

- ***գործարարություն սկսելու, շինարարական թույլտվություններ ստանալու, վարկի ստացումը և հարկերի վճարումը*** ենթաինդեքսները զգալիորեն բարելավվել են շնորհիվ այդ ոլորտում իրականացված լայնածավալ բարեփոխումների,
- ***էլեկտրաէներգիայի ստացում, սեփականության գրանցում, ներդրողների պաշտպանվածություն, սահմանային առևտրի դյուրինություն և անվճարունակության պատճառով լուծարում*** ենթաինդեքսները վատացել են պայմանավորված ոչ թե Հայաստանում այդ ոլորտների հետընթացով, այլ Հայաստանի համեմատ աշխարհի մյուս երկրների ավելի արագ առաջընթացով,
- ***պայմանագրի կիրարկում*** ենթաինդեքսը վատացել է պայմանավորված պայմանագրի կիրարկման համար ընկերությունների կողմից ծախսվող ժամանակի կտրուկ՝ 155 օրով ավելացմամբ:

<u>Հայաստանը տարածաշրջանային համապատկերում</u>. **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը-2012»** հետազոտության մեջ ենթաինդեքսների գնահատման մեթոդաբանության ուսումնասիրման, ինչպես նաև աղյուսակներ 2 և 3-ում ներկայացված Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի 2012թ. ինդեքսների համեմատական վերլուծության արդյունքում նկատում ենք, որ Հայաստանը.

- գերազանցում է իր հարևան երկրներին **«Անվճարունակության պատճառով լուծարում»** ոլորտում,
- զիջում է իր հարևան երկու երկրներին **«Հարկերի վճարումը», «Ներդրողների պաշտպանվածությունը»** և **«Պայմանագրերի կիրարկումը»** ոլորտներում,
- զիջում է միայն Վրաստանին **«Գործարարություն սկսելը (գրանցելը)», «Շինարարական թույլտվություններ ստանալը»**, **«Էլեկտրաէներգիայի ստացումը», «Սեփականության գրանցումը», «Վարկի ստացումը» և «Սահմանային առևտրի դյուրինությունը»** ոլորտներում:

Հարավկովկասյան տարածաշրջանի տեսակետից հարկ ենք համարում քննարկել ***հարկերի վճարումը, ներդրողների պաշտպանվածությունը*** և ***սահմանային առևտրի դյուրինությունը*** ենթաինդեքսները, որոնցով Հայաստանը զիջում է իր հարևան երկու երկրներին էլ (տե՛ս աղյուսակ 3):

Հարկերի վճարում ենթաինդեքսով Հայաստանը զբաղեցնում է 153-րդ տեղը՝ աշխարհի 183 երկրների թվում և զգալիորեն զիջում է թե՛ Վրաստանին և թե՛ Ադրբեջանին: Այս ենթաինդեքսի գծով հարավ-կովկասյան երեք երկրներն էլ նախորդ տարվա համեմատ գրանցել են առաջընթաց, սակայն

Հայաստանի դիրքը բարելավվել է 6 տեղով, Վրաստանինը՝ 20 տեղով, Ադրբեջանինը՝ 24 տեղով: Հարկ է նկատել, որ եթե նախորդ տարվա համեմատ Վրաստանում կրճատվել է միայն հարկերի տարեկան վճարումների թիվը (14-ով), իսկ Ադրբեջանում՝ միայն հարկերի վճարման վրա ծախսվող ժամանակը (70 ժամով), ապա Հայաստանում կրճատվել է ինչպես հարկերի տարեկան վճարումների թիվը (16-ով), այնպես էլ դրա վրա ծախսվող ժամանակը (81 ժամով): Չնայած այս բարեփոխումներին, ներկայումս Հայաստանում ձեռներեցները կատարում են հարկերի տարեկան 34 վճարում (Վրաստանում՝ 4, Ադրբեջանում՝ 18)՝ ծախսելով 500 ժամ (Վրաստանում՝ 387, Ադրբեջանում՝ 225) և վճարում են իրենց համախառն շահույթի 40.9%-ը (Վրաստանում՝ 16.5%, Ադրբեջանում՝ 40.0%):

Ներդրողների պաշտպանվածություն ենթաինդեքսի ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 97-րդ տեղը՝ աշխարհի 183 երկրների թվում և զգալիորեն զիջում է թե՛ Վրաստանին և թե՛ Ադրբեջանին: Հայաստանում բարձր է «Սեփականատերերի դատական հայցերի դյուրինության ինդեքսը», սակայն Վրաստանի և Ադրբեջանի համեմատ ցածր է «Տնօրենի պատասխանատվության չափի ինդեքս»-ը, ինչը նշանակում է, որ, չնայած Հայաստանում սեփականատերերը հեշտությամբ կարող են դատական հայց ներկայացնել տնօրենի կողմից իրավասությունների չարաշահման դեպքում, սակայն գործադիր տնօրենի պատասխանատվության աստիճանը դեռևս ցածր է: Հայաստանում՝ Վրաստանի և Ադրբեջանի համեմատ ցածր է նաև «Թափանցիկության չափի ինդեքսը»:

Սահմանային առևտրի դյուրինություն ենթաինդեքսի գնահատականի հետ կապված հարկ է նշել, որ չնայած էական բարեփոխումներին, Հայաստանը իր 104-րդ տեղով դեռևս զգալիորեն զիջում է Վրաստանին, որը զբաղեցնում է 54-րդ տեղը: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ Վրաստանի համեմատ Հայաստանում ավելի շատ փաստաթղթեր, ժամանակ (օր) և դրամական միջոցներ են ծախսվում արտահանման և ներմուծման ստանդարտ գործընթացների վրա: Մասնավորապես, ներկայումս Հայաստանում արտահանման համար պահանջվում է 5 փաստաթուղթ, 13 օր և 1815 ԱՄՆ դոլարի ծախս (Վրաստանում՝ 4 փաստաթուղթ, 10 օր և 1595 ԱՄՆ դոլար), իսկ ներմուծում իրականացնելու համար պահանջվում է 8 փաստաթուղթ, 18 օր և 2195 ԱՄՆ դոլար (Վրաստանում՝ 4 փաստաթուղթ, 13 օր և 1715 ԱՄՆ դոլար) (տե՛ս աղյուսակ 3):

Ինչ վերաբերում է Հայաստանի հարևան մյուս երկու երկրների՝ Թուրքիայի և Իրանի հետ Հայաստանի համեմատությանը, նկատենք, որ Հայաստանը գերազանցում է երկու երկրին էլ «**Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2012**» ինդեքսով. աշխարհի 183 երկրների շարքում Թուրքիան գրավում է 71-րդ տեղը, իսկ Իրանը՝ 144-րդ տեղը (տե՛ս աղյուսակներ 4 և 5): Այս ինդեքսի հիմքում ընկած առանձին ենթաինդեքսների գծով պատկերը հետևյալն է՝

- Հայաստանը գերազանցում է Թուրքիային և Իրանին **«Գործարարություն սկսելը (գրանցելը)», «Շինարարական թույլտվություններ ստանալը»**, **«Սեփականության գրանցումը», «Վարկի ստացումը» և «Անվճարունակության պատճառով լուծարումը»** ոլորտներում,
- Հայաստանը զիջում է Թուրքիային և Իրանին **«Հարկերի վճարումը» և «Պայմանագրերի կիրարկումը»** ոլորտներում**,**
- Հայաստանը զիջում է միայն Թուրքիային **«Էլեկտրաէներգիայի ստացումը», «Ներդրողների պաշտպանվածությունը» և «Սահմանային առևտրի դյուրինությունը»** ոլորտներում:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների շարքում գործարար միջավայրի կարգավորմամբ Հայաստանը զիջում է Մակեդոնիային, Սլովենիային, Սլովակիային և Հունգարիային, իսկ նախկին

խորհրդային երկրների շարքում՝ Վրաստանին, մերձբալթյան երկրներին և Ղազախստանին (տե՛ս աղյուսակ 4):

Հայաստանի 2004-2012թթ. ամփոփ ինդեքսների, ենթաինդեքսների և դրանց հիմքում ընկած ցուցանիշների դինամիկան, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում, ինչպես նաև Թուրքիայում և Իրանում գործարարությամբ զբաղվելու դյուրինության համեմատական նկարագիրը ներկայացված են 1-5 աղյուսակներում:

Հայաստանի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2012» ինդեքսի առանձին ցուցանիշների համեմատությունը (2004-2012 թթ.)

Աղյուսակ 1

Տնտեսություն		Հայաստան								
Տարի		*2012*	*2011*	*2010*	*2009*	*2008*	*2007*	2006	*2005*	*2004*
Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը	**երկրների թիվը**	**183**	**183**	**183**	**181**	**178**	**175**	**155**	**145**	**145**
	երկրի դիրքը	**55**	**61**	**44**	**50**	**41**	**34**	**37**	**...**	**...**
Գործարարություն սկսելը (գրանցելը)	**Տեղը**	**10**	**20**	**20**	**65**	**49**	**46**	**48**	**...**	**...**
	Ընթացակարգեր (քանակ)	3	5	5	8	8	8	9	9	9
	Ժամանակ (օրեր)	8	14	14	17	17	17	18	18	18
	Ծախս (1 շնչի հաշվով եկամտի %)	2.9	3.1	2.6	3.6	4.8	5.1	6.1	7	8.4
	Նվազագույն կապիտալ (1 շնչի հաշվով եկամտի %)	0	0	0	2.3	3.1	3.3	4	4.5	5.4
Շինարարական թույլտվություններ ստանալը	**Տեղը**	**57**	**95**	**72**	**75**	**73**	**36**	**70**	**...**	**...**
	Ընթացակարգեր (քանակ)	18	19	19	19	19	19	21	...	...
	Ժամանակ (օրեր)	79	136	136	148	148	148	183	...	...
	Ծախս (1 շնչի հաշվով եկամտի %)	57.1	122	105	113	152	563	545	...	...
Էլեկտրաէնեգիայի ստացումը	**Տեղը**	150	148	...	...	...	...	...	...	...
	Ընթացակարգեր (քանակ)	6	6	...	...	...	...	...	...	...
	Ժամանակ (օրեր)	242	242	...	...	...	...	...	...	...
	Ծախս (1 շնչի հաշվով եկամտի %)	258	279	...	...	...	...	...	...	...
Սեփականության գրանցումը	**Տեղը**	**5**	**4**	**4**	**6**	**2**	**2**	**6**	**...**	**...**
	Ընթացակարգեր (քանակ)	3	3	3	3	3	3	4	4	...
	Ժամանակ (օրեր)	7	7	4	4	4	4	6	6	...
	Ծախս (սեփականության արժեքի %)	0.3	0.3	0.3	0.3	0.4	0.4	0.5	0.6	...
Վարկի ստացումը	**Տեղը**	**40**	**45**	**44**	**41**	**25**	**65**	**76**	**...**	**....**
	Օրինական իրավունքների ինդեքսի ամրություն (0-10)	6	6	6	6	6	6	5	5	...
	Վարկային տեղեկատվության ինդեքսի խորություն (0-6)	6	5	5	5	5	3	3	...	...
	Պետական ռեգիստրի ծածկույթ (տոկոս՝ չափահաս բնակչությունից)	23.7	16.9	4.4	2.6	2.8	1.5	2.6	...	...
	Մասնավոր բյուրոյի ծածկույթ (տոկոս՝ չափահաս բնակչությունից)	46.6	38.3	34.5	24.4	13.5	0	0	0	...

	Տեղը	**97**	**93**	**92**	**88**	**84**	**83**	**81**		
Ներդրողների պաշտպանվածությունը	Թափանցիկության չափի ինդեքս (0-10)	5	5	5	5	5	5	5	...	...
	Տնօրենի պատասխանատվության չափի ինդեքս (0-10)	2	2	2	2	2	2	2	...	...
	Սեփականատերերի դատական հայցերի դյուրինության ինդեքս (0-10)	8	8	8	8	8	8	8	...	...
	Ներդրողների պաշտպանության ամրության ինդեքս (0-10)	5	5	5	5	5	5	5	**...**	**...**
Հարկերի վճարումը	**Տեղը**	**153**	**159**	**157**	**151**	**147**	**148**	**147**	**...**	**...**
	Վճարումներ (տարեկան՝ թիվ)	34	50	50	50	50	50	50	...	...
	Ժամանակ (տարեկան՝ ժամեր)	500	581	581	581	581	580	580	...	...
	Շահութահարկ, եկամտահարկ (%)	16.8	16.6	...	..	..	...	...	...	...
	Սոցապ և կենսաթոշակային վճարումներ (%)	23	23	...	..	..	...	...	...	...
	Այլ հարկեր (%)	1.1	1.1	...	..	..	...	...	...	...
	Ընդհանուր հարկերի դրույքաչափ (շահույթի տոկոս)	40.9	40.7	40.7	40.7	40.7	38.7	38.7	...	...
Սահմանային առևտրի դյուրինությունը	**Տեղը**	**104**	**103**	**103**	**136**	**131**	**119**	**113**	**...**	**...**
	Արտահանման համար անհրաժեշտ փաստաթղթեր (քանակ)	5	5	7	6	6	6	6	...	...
	Արտահանման համար անհրաժեշտ ժամանակ (օրեր)	13	13	17	30	30	34	34	...	...
	Արտահանման ծախս (ԱՄՆ դոլար/կոնտեյներ)	1,815	1,665	1,731	1,746	1,165	1,600	1,600	...	...
	Ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր (քանակ)	8	8	9	8	8	6	6	...	...
	Ներմուծման համար անհրաժեշտ ժամանակ (օրեր)	18	18	20	24	24	37	37	...	...
	Ներմուծման ծախսը (ԱՄՆ դոլար/կոնտեյներ)	2,195	2,045	2,096	2,111	1,465	1,880	1,880	...	...
Պայմանագրերի կիրարկումը	**Տեղը**	**91**	**64**	**62**	**61**	**63**	**18**	**19**	**...**	**...**
	Ընթացակարգեր (քանակ)	49	49	49	49	50	50	50	50	50
	Ժամանակ (օրեր)	440	285	285	285	285	285	285	295	327
	Ծախս (պահանջի տոկոս)	19	19	19	19	19	19	19	19	19
Անվճարունակության պատճառով լուծարումը	**Տեղը**	**62**	**56**	**49**	**49**	**47**	**40**	**39**	**...**	**...**
	Ժամանակ (տարիներ)	1.9	1.9	1.9	1.9	1.9	1.9	1.9	1.9	1.9
	Ծախս (գույքի տոկոս)	4	4	4	4	4	4	4	4	4
	Վերականգնման չափը (ցենտ)	40.3	40.6	41.8	41.8	41.7	41.7	40.7	39.3	39.3

Հարավկովկասյան երկրների «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2012 թ.» ինդեքսի առանձին ենթաինդեքսների համեմատությունը

Աղյուսակ 2

Ո ւ ղ ր ա տ ն ե ր ը	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան
Գործարարությամբ զբաղվելու դյուրինություն (դիրքը աշխարհի 183 երկրների շարքում)	55	16	66
Գործարարություն սկսելը (գրանցելը)	10	7	18
Շինարարական թույլտվություններ ստանալը	57	4	172
Էլեկտրաէներգիայի ստացումը	150	89	173
Սեփականության գրանցումը	5	1	9
Վարկի ստացումը	40	8	48
Ներդրողների պաշտպանվածությունը	97	17	24
Հարկերի վճարումը	153	42	81
Սահմանային առևտրի դյուրինությունը	104	54	170
Պայմանագրերի կիրարկումը	91	41	25
Անվճարունակության պատճառով լուծարումը	62	109	95
1 շնչին բաժին ընկնող ՀԱԱ (2010 թ., ԱՄՆ դոլար)	3,090	2,690	5180
Բնակչություն (2010 թ., մարդ)	3,090,379	4,428,544	8,883,200

Հարավկովկասյան երկրների «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը» 2011-2012 թթ. ինդեքսների առանձին ցուցանիշների համեմատությունը

Աղյուսակ 3

Տնտեսություն		Հայաստան		Վրաստան		Ադրբեջան	
Տարի		2012	2011	2012	2011	2012	2011
Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը	**երկրների թիվը**	**183**	**183**	**183**	**183**	**183**	**183**
	երկրի դիրքը	**55**	**61**	**16**	**17**	**66**	**69**
Գործարարություն սկսելը (գրանցելը)	**Տեղը**	**10**	**20**	**7**	**8**	**18**	**16**
	Ընթացակարգեր (քանակ)	3	5	2	3	6	6
	Ժամանակ (օրեր)	8	14	2	3	8	8
	Ծախս (1 շնչի հաշվով եկամտի %)	2.9	3.1	4.3	5	2.7	3.1
	Նվազագույն կապիտալ (1 շնչի հաշվով եկամտի %)	0	0	0	0	0	0
Շինարարական թույլտվություններ ստանալը	**Տեղը**	**57**	**95**	**4**	**6**	**172**	**172**
	Ընթացակարգեր (քանակ)	18	19	9	9	30	30
	Ժամանակ (օրեր)	79	136	74	74	212	212
	Ծախս (1 շնչի հաշվով եկամտի %)	57.1	122	20.2	23.2	335.2	385.6
Էլեկտրաէնեգիայի ստացումը	**Տեղը**	150	148	89	91	173	173
	Ընթացակարգեր (քանակ)	6	6	5	5	9	9
	Ժամանակ (օրեր)	242	242	97	97	241	241
	Ծախս (1 շնչի հաշվով եկամտի %)	258	279	751.3	861	677.6	779.6
Սեփականության գրանցումը	**Տեղը**	**5**	**4**	1	2	9	**9**
	Ընթացակարգեր (քանակ)	3	3	1	1	4	4
	Ժամանակ (օրեր)	7	7	2	2	11	11
	Ծախս (սեփականության արժեքի %)	0.3	0.3	0.1	0.1	0.2	0.2
Վարկի ստացումը	**Տեղը**	**40**	**45**	**8**	**21**	**48**	**45**
	Օրինական իրավունքների ինդեքսի ամրություն (0-10)	6	6	8	7	6	6
	Վարկային տեղեկատվության ինդեքսի խորություն (0-6)	6	5	6	6	5	5
	Պետական ռեգիստրի ծածկույթ (տոկոս՝ չափահաս բնակչությունից)	23.7	16.9	0	0	15.6	7.0
	Մասնավոր բյուրոյի ծածկույթ (տոկոս՝ չափահաս բնակչությունից)	46.6	38.3	29.6	16.4	0	0

	Տեղը	**97**	**93**	**17**	**21**	**24**	**21**
Ներդրողների պաշտպանվածությունը	Թափանցիկության չափի ինդեքս (0-10)	5	5	9	8	7	7
	Տնօրենի պատասխանատվության չափի ինդեքս (0-10)	2	2	6	6	5	5
	Սեփականատերերի դատական հայցերի դյուրինության ինդեքս (0-10)	8	8	6	6	8	8
	Ներդրողների պաշտպանության ամրության ինդեքս (0-10)	5	5	7.0	6.7	6.7	6.7
Հարկերի վճարումը	**Տեղը**	**153**	**159**	**42**	**62**	**81**	**105**
	Վճարումներ (տարեկան՝ թիվ)	34	50	4	18	18	18
	Ժամանակ (տարեկան՝ ժամեր)	500	581	387	387	225	306
	Շահութահարկ, եկամտահարկ (%)	16.8	16.6	14.3	13.3	12.9	13.8
	Սոցապ և կենսաթոշակային վճարումներ (%)	23	23	0	0	24.8	24.8
	Այլ հարկեր (%)	1.1	1.1	2.2	2.0	2.2	2.2
	Ընդհանուր հարկերի դրույքաչափ (շահույթի տոկոս)	40.9	40.7	16.5	15.3	40.0	40.9
Սահմանային առևտրի դյուրինությունը	**Տեղը**	**104**	**103**	**54**	**34**	**170**	**169**
	Արտահանման համար անհրաժեշտ փաստաթղթեր (քանակ)	5	5	4	4	8	8
	Արտահանման համար անհրաժեշտ ժամանակ (օրեր)	13	13	10	10	38	38
	Արտահանման ծախս (ԱՄՆ դոլար/կոնտեյներ)	1,815	1,665	1,595	1,329	2,905	2,980
	Ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր (քանակ)	8	8	4	4	10	10
	Ներմուծման համար անհրաժեշտ ժամանակ (օրեր)	18	18	13	13	42	42
	Ներմուծման ծախսը (ԱՄՆ դոլար/կոնտեյներ)	2,195	2,045	1,715	1,316	3,405	3,480
Պայմանագրերի կիրարկումը	**Տեղը**	**91**	**64**	**41**	**40**	**25**	**25**
	Ընթացակարգեր (քանակ)	49	49	36	36	39	39
	Ժամանակ (օրեր)	440	285	285	285	237	237
	Ծախս (պահանջի տոկոս)	19	19	29.9	29.9	18.5	18.5
Անվճարունակության պատճառով լուծարումը	**Տեղը**	**62**	**56**	**109**	**111**	**95**	**93**
	Ժամանակ (տարիներ)	1.9	1.9	3.3	3.3	2.7	2.7
	Ծախս (գույքի տոկոս)	4	4	4	4	8	8
	Վերականգնման չափը (ցենտ)	40.3	40.6	25.1	25.1	29.7	28.8

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2012» ինդեքսի առանձին ենթաինդեքսների համեմատությունը (դիրքը աշխարհի 183 երկրների շարքում)

Աղյուսակ 4

Երկիրը/ ինդեքսի տեղը	Գործարարությամբ զբաղվելու ընդհանուր դիրքը	Գործարարություն սկսելու (միջազգային) ընդհանուր դիրքը	Շինարարության թույլտվությունների ստացում	Էլեկտրաէներգիայի ստացում	Սեփականության գրանցումը	Վարկի ստացումը	Ներդրողների պաշտպանվածություն	Հարկերի վճարումը	Սահմանային առևտրի դյուրինությունը	Պայմանագրերի կիրարկման դյուրինությունը	Սնանկության իրականացման դյուրինությունը
Վրաստան	16	7	4	89	1	8	17	42	54	41	109
Լատվիա	21	51	112	84	32	4	65	67	15	17	32
Մակեդոնիա	22	6	61	121	49	24	17	26	67	60	55
Էստոնիա	24	44	89	48	13	40	65	51	3	29	72
Լիտվա	27	101	47	81	7	48	65	62	28	15	40
Սլովենիա	37	28	81	27	79	98	24	87	50	58	39
Ղազախստան	47	57	147	86	29	78	10	13	176	27	54
Սլովակիա	48	76	50	102	10	24	111	130	95	71	35
Հունգարիա	51	39	55	103	43	48	122	117	74	19	66
Հայաստան	55	10	57	150	5	40	97	153	104	91	62
Մոնտենեգրո	56	47	173	71	108	8	29	108	34	133	52
Բուլղարիա	59	49	128	133	66	8	46	69	91	87	90
Լեհաստան	62	126	160	64	89	8	46	128	46	68	87
Չեխիա	64	138	68	148	34	48	97	119	70	78	33
Ադրբեջան	66	18	172	173	9	48	24	81	170	25	95
Բելառուս	69	9	44	175	4	98	79	156	152	14	82
Ղրղզստան	70	17	62	181	17	8	13	162	171	48	150
Թուրքիա	71	61	155	72	44	78	65	79	80	51	120
Ռումինիա	72	63	123	165	70	8	46	154	72	56	97
Խորվաթիա	80	67	143	56	102	48	133	32	100	48	94
Մոլդովա	81	88	164	160	18	40	111	83	134	26	91
Ալբանիա	82	61	183	154	118	24	16	152	76	85	64
Սերբիա	92	92	175	79	39	24	79	143	79	104	113
Կոսովո	117	168	171	124	73	24	174	46	131	157	31
Ռուսաստան	120	111	178	183	45	98	111	105	160	13	60
Բոսնիա և Հերց.	125	162	163	157	100	67	97	110	108	125	80
Իրան	144	53	164	162	163	98	166	126	138	50	118
Տաջիկստան	147	70	177	178	90	177	65	168	177	42	68
Ուկրաինա	152	112	180	169	166	24	111	181	140	44	156
Ուզբեկստան	166	96	145	170	136	159	133	157	183	43	117

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների դիրքը աշխարհի 183 երկրների շարքում «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2012» ինդեքսով՝ ըստ առանձին ենթաինդեքսների և երկրների հաջորդականության

Աղյուսակ 5

Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը	
Վրաստան	16
Լատվիա	21
Մակեդոնիա	22
Էստոնիա	24
Լիտվա	27
Սլովենիա	37
Ղազախստան	47
Սլովակիա	48
Հունգարիա	51
Հայաստան	55
Մոնտենեգրո	56
Բուլղարիա	59
Լեհաստան	62
Չեխիա	64
Ադրբեջան	66
Բելառուս	69
Ղրղզստան	70
Թուրքիա	71
Ռումինիա	72
Խորվաթիա	80
Մոլդովա	81
Ալբանիա	82
Սերբիա	92
Կոսովո	117
Ռուսաստան	120
Բոսնիա և Հերց.	125
Իրան	144
Տաջիկստան	147
Ուկրաինա	152
Ուզբեկստան	166

Գործարարություն սկսելը (գրանցվելը)	
Մակեդոնիա	6
Վրաստան	7
Բելառուս	9
Հայաստան	10
Ղրղզստան	17
Ադրբեջան	18
Սլովենիա	28
Հունգարիա	39
Էստոնիա	44
Մոնտենեգրո	47
Բուլղարիա	49
Լատվիա	51
Իրան	53
Ղազախստան	57
Թուրքիա	61
Ալբանիա	61
Ռումինիա	63
Խորվաթիա	67
Տաջիկստան	70
Սլովակիա	76
Մոլդովա	88
Սերբիա	92
Ուզբեկստան	96
Լիտվա	101
Ռուսաստան	111
Ուկրաինա	112
Լեհաստան	126
Չեխիա	138
Բոսնիա և Հերց.	162
Կոսովո	168

Շինարարական թույլտվությունների ստացումը	
Վրաստան	4
Բելառուս	44
Լիտվա	47
Սլովակիա	50
Հունգարիա	55
Հայաստան	57
Մակեդոնիա	61
Ղրղզստան	62
Չեխիա	68
Սլովենիա	81
Էստոնիա	89
Լատվիա	112
Ռումինիա	123
Բուլղարիա	128
Խորվաթիա	143
Ուզբեկստան	145
Ղազախստան	147
Թուրքիա	155
Լեհաստան	160
Բոսնիա և Հերց.	163
Մոլդովա	164
Իրան	164
Կոսովո	171
Ադրբեջան	172
Մոնտենեգրո	173
Սերբիա	175
Տաջիկստան	177
Ռուսաստան	178
Ուկրաինա	180
Ալբանիա	183

Էլեկտրաէներգիայի ստացումը	
Սլովենիա	27
Էստոնիա	48
Խորվաթիա	56
Լեհաստան	64
Մոնտենեգրո	71
Թուրքիա	72
Սերբիա	79
Լիտվա	81
Լատվիա	84
Ղազախստան	86
Վրաստան	89
Սլովակիա	102
Հունգարիա	103
Մակեդոնիա	121
Կոսովո	124
Բուլղարիա	133
Չեխիա	148
Հայաստան	150
Ալբանիա	154
Բոսնիա և Հերց.	157
Մոլդովա	160
Իրան	162
Ռումինիա	165
Ուկրաինա	169
Ուզբեկստան	170
Ադրբեջան	173
Բելառուս	175
Տաջիկստան	178
Ղրղզստան	181
Ռուսաստան	183

Սեփականության գրանցումը	
Վրաստան	1
Բելառուս	4
Հայաստան	5
Լիտվա	7
Ադրբեջան	9
Սլովակիա	10
Էստոնիա	13
Ղրղզստան	17
Մոլդովա	18
Ղազախստան	29
Լատվիա	32
Չեխիա	34
Սերբիա	39
Հունգարիա	43
Թուրքիա	44
Ռուսաստան	45
Մակեդոնիա	49
Բուլղարիա	66
Ռումինիա	70
Կոսովո	73
Սլովենիա	79
Լեհաստան	89
Տաջիկստան	90
Բոսնիա և Հերց.	100
Խորվաթիա	102
Մոնտենեգրո	108
Ալբանիա	118
Ուզբեկստան	136
Իրան	163
Ուկրաինա	166

Վարկի ստացումը	
Լատվիա	4
Վրաստան	8
Մոնտենեգրո	8
Բուլղարիա	8
Լեհաստան	8
Ղրղզստան	8
Ռումինիա	8
Մակեդոնիա	24
Սլովակիա	24
Ալբանիա	24
Սերբիա	24
Կոսովո	24
Ուկրաինա	24
Էստոնիա	40
Հայաստան	40
Մոլդովա	40
Լիտվա	48
Հունգարիա	48
Չեխիա	48
Ադրբեջան	48
Խորվաթիա	48
Բոսնիա և Հերց.	67
Ղազախստան	78
Թուրքիա	78
Սլովենիա	98
Բելառուս	98
Ռուսաստան	98
Իրան	98
Ուզբեկստան	159
Տաջիկստան	177

Ներդրողների պաշտպանվածությունը	
Ղազախստան	10
Ղրղզստան	13
Ալբանիա	16
Վրաստան	17
Մակեդոնիա	17
Սլովենիա	24
Ադրբեջան	24
Մոնտենեգրո	29
Բուլղարիա	46
Լեհաստան	46
Ռումինիա	46
Լատվիա	65
Էստոնիա	65
Լիտվա	65
Թուրքիա	65
Տաջիկստան	65
Բելառուս	79
Սերբիա	79
Հայաստան	97
Չեխիա	97
Բոսնիա և Հերց.	97
Սլովակիա	111
Մոլդովա	111
Ռուսաստան	111
Ուկրաինա	111
Հունգարիա	122
Խորվաթիա	133
Ուզբեկստան	133
Իրան	166
Կոսովո	174

Հարկերի վճարումը	
Ղազախստան	13
Մակեդոնիա	26
Խորվաթիա	32
Վրաստան	42
Կոսովո	46
Էստոնիա	51
Լիտվա	62
Լատվիա	67
Բուլղարիա	69
Թուրքիա	79
Ադրբեջան	81
Մոլդովա	83
Սլովենիա	87
Ռուսաստան	105
Մոնտենեգրո	108
Բոսնիա և Հերց.	110
Հունգարիա	117
Չեխիա	119
Իրան	126
Լեհաստան	128
Սլովակիա	130
Սերբիա	143
Ալբանիա	152
Հայաստան	153
Ռումինիա	154
Բելառուս	156
Ուզբեկստան	157
Ղրղզստան	162
Տաջիկստան	168
Ուկրաինա	181

Սահմանային առևտրի դյուրինությունը	
Էստոնիա	3
Լատվիա	15
Լիտվա	28
Մոնտենեգրո	34
Լեհաստան	46
Սլովենիա	50
Վրաստան	54
Մակեդոնիա	67
Չեխիա	70
Ռումինիա	72
Հունգարիա	74
Ալբանիա	76
Սերբիա	79
Թուրքիա	80
Բուլղարիա	91
Սլովակիա	95
Խորվաթիա	100
Հայաստան	104
Բոսնիա և Հերց.	108
Կոսովո	131
Մոլդովա	134
Իրան	138
Ուկրաինա	140
Բելառուս	152
Ռուսաստան	160
Ադրբեջան	170
Ղրղզստան	171
Ղազախստան	176
Տաջիկստան	177
Ուզբեկստան	183

Պայմանագրերի կիրարկումը	
Ռուսաստան	13
Բելառուս	14
Լիտվա	15
Լատվիա	17
Հունգարիա	19
Ադրբեջան	25
Մոլդովա	26
Ղազախստան	27
Էստոնիա	29
Վրաստան	41
Տաջիկստան	42
Ուզբեկստան	43
Ուկրաինա	44
Ղրղզստան	48
Խորվաթիա	48
Իրան	50
Թուրքիա	51
Ռումինիա	56
Սլովենիա	58
Մակեդոնիա	60
Լեհաստան	68
Սլովակիա	71
Չեխիա	78
Ալբանիա	85
Բուլղարիա	87
Հայաստան	91
Սերբիա	104
Բոսնիա և Հերց.	125
Մոնտենեգրո	133
Կոսովո	157

Անվճարունակության պատճառով լուծարումը	
Կոսովո	31
Լատվիա	32
Չեխիա	33
Սլովակիա	35
Սլովենիա	39
Լիտվա	40
Մոնտենեգրո	52
Ղազախստան	54
Մակեդոնիա	55
Ռուսաստան	60
Հայաստան	62
Ալբանիա	64
Հունգարիա	66
Տաջիկստան	68
Էստոնիա	72
Բոսնիա և Հերց.	80
Բելառուս	82
Լեհաստան	87
Բուլղարիա	90
Մոլդովա	91
Խորվաթիա	94
Ադրբեջան	95
Ռումինիա	97
Վրաստան	109
Սերբիա	113
Ուզբեկստան	117
Իրան	118
Թուրքիա	120
Ղրղզստան	150
Ուկրաինա	156